

Հետեւեալները Պօրոյ Ազգային Իրազմանքին կը բաղկանի եւ կը հարգուի ի տեղեկութիւն ռուսաստանարեւելի սիրելի ազգայնոց մերոց:

Ար լանք թէ Բաղիշու առաջնորդ Վեր. Մամբրէ վարդապետին Հայաստանի մանկանց կրթութեան ու լուսաւորութեան համար այնչափ ներդրութեամբ ու տառապանօք պատրաստած տղարանին բացման հրամաններ Խառն ժողովոյ ջանքիւք Բ. Վանէն ուղղապէս շնորհուեր է:

Մասիս, Թիւ 907.

Արուսազիւնայ Սիօն ամառային (Թիւ մոյլախ) հետեւեալ կերպիւ կմանրագրամէ Բեթղէհէմի Օննգեան սյրին մէջ սեղեռնեցած հրդեհին ու պատկերազոզութեան դէպքը, որուն վրայ անցեալները կանխեցինք իրօսել:

«Մտոյս 8 ին, զիշերուան Ժամը 5 ին, մեր Արժանապատիւ միաբաններէն Օննգեան վանուց տեսուչ Թադէոս վարդապետն Երասիկըցի Բեթղէհէմէն սուրբ Աթոռս գալով՝ յայտնեց թէ՛ Օննգեան սյրի հիւսիսային կողման լատինական դռնէն հրդեհ սկսելով՝ կարգաւ սյրեր է Աւաթիւնայ գրան վարագոյրը միջնախորհրի առատաղի վարագոյրը, որ երեք աղբաց կը պատկանի, աւագ սեղանի վարագոյրը, Հայոց ու Յունաց քանի մի պատկերները եւ ընդ նմին փոկերը սյրուելով Թափուեր են բաւականին կանթեղներ: Երժանապատիւ տեսուչը յայտնեց նմանապէս, որ այս նախատեսան աճքը պատահած է զիմամբ, որոյ պատճառ աւ Աւաթիւնայ եւ Յունաց տեսուչները մեկրմէկ կը մեղադրեն իրրե թեւաղիւր այս անախքիստանեական իրողութեան:

«Սոյն անախիկալ լրոյն վրայ, իսկոյն առանց ժամանակ կորուսանելու, Աթոռոյս տաղ Թարգման Երժ, Մատթէոս վարդապետն Բեթղէհէմ զրկուեցաւ. իսկ հետեւեալ

օրը քաղաքիս Ասեմ. Ապրիլի Փաշան, Աթոռոյս Ամեն. Պատրիարքը եւ Վեր. Ամէօն կախիկապար, Յունաց Պատրիարքը իւր պաշտօնական անձինքներով եւ նմանապէս Վարդգիսեաց հիւսարատար եւ առնազալիքը անապարեցին Բեթղէհէմ, ուր կրկար բանախօսութեանէն զինի, ստանց հրկիզութեան աղբիւրը որոնուելու, որոշուեցաւ որ նոր վարագոյրներ, պատկերներ եւ կանթեղներ կախուին ըստ առաջին քանակութեան եւ ըստ սեպհականութեան իւրաքանչիւր աղբի: Սակոյն Աւաթիւն, ընդ որս Վարդգիսեան Հիւսարատար, պնդեցին թէ՛ բաց ի իրենց գրան վարագուրէն՝ միջնախորհի վարագոյրն եւս իրենց կը պատկանի եւ իրենք պարտական են նորոգել: Մեր եւ Յունաց Պատրիարքները ընդդիմացան այս նորկրեւոյթ արտօնութեանը, առարկելով որ նոյն վարագոյրը երեք աղբաց կը պատկանի: Հետեւապէս այս ընդդիմախօսութեան պատճառաւ միջնախորհի վարագուրի նորոգութեան խնդիրը կախ մնաց եւ միւս վարագոյրները, պատկերները եւ կանթեղները կախուեցան ըստ սեպհականութեան իւրաքանչիւր աղբի, թեպէտ եւ Աւաթիւն վարդապետները զայրազին ընդդիմութիւններ ցուցին Հայոց սեպհականութեանց զետեղուելու մասին: Մոռացանք ասել, որ երկարատե բանախօսութեան միջոցին Աւաթիւն կը ջանային եւ կը պնդէին արձանագրութեան առնուլ միայն ներկայ զանուած սեպհականութիւնները ըստ իւրաքանչիւր աղբի. սակոյն այս առարկութիւնը ապօրինի համարուելով՝ արձանագրուեցան յառաջ քան հրդեհը զանուած սեպհականութիւնները եւ ըստ այնմ տնօրինուեցաւ:

«Հաղիւ թէ 12 օր անցած էր սոյն տնօրնութեան վրայ, յանկարծ լուր հասաւ թէ՛ Հայոց եօթն պատկերները եւ Յունաց մէկ պատկերն (զուցէ սխալմամբ) գողցուած են եւ Օննգեան տեղոյն արձաթեայ աստ»

դանիչ կերտուածի մէկ բեկը հանուած : Ա կրտսին երկք ազգաց կողմէն պաշտանա- կան անձինք Բեկիչէ հեմ գիմեցին և Հայք առանց գողը և գողներ որոնելու՝ կամեցան նոր պատկերներ կախել գողցուածներուն տեղ : Ասկայն Աստինք իտպառ ընդդիմա- ցան, յառաջ բերելով թէ՛ մինչև որ միջ- նապայրի վարագոյրը չնորոգուի իբրև լատի- նական սեպհականութիւն, Հայք իրաւունք չունին իրենց պատկերները կախելու : Այս տեղէն ինդիլըր առաւել ծանր կիպարանք առաւ և Փաշայի կողմէն պահապան գորք գրկուեցաւ Բեկիչէ հեմ և հեռադրուեցաւ ի Պօլիս Բ. Գրան՝ այս դժպտեմ հանցքին դարման մատուցանելու : Հեռադրի պա- տասխանը ի շնորհս Աստինաց գալով՝ Հա- յոց և Յունաց կողմէն դժգոհութիւն բար- ձրացաւ : Փաշան ստիպուեցաւ վերստին հե- ռադրել և ցարդ պատասխանւոյն կապա- սուի : Հեռուսպէս լատինական ընդդիմու- թեանն պարզապէս կերկի, որ հրկիզութեան աղբիւրն ևս լատինական է (Թէպէտ և ի- բնք թեկադիր կը համարեն Յոյները) : Կտան զն Աւրոպայի մէջ . . . . . Աստին կրօ- նաւորութիւնը խիստ անարդէլ զօրանալու վրայ է Պաղեստինի մէջ :

«Աս այժմ իրաց վիճակը այսպէս է— Աստինք կը խրոխտան, Յոյնք գողցես ան- տարբեր են, Հայք կը տաղնապին, Հայոց պատկերները առանց կախուելու մնացած են, գօրական պահապանները տաճարի մէջ կը հսկեն, երկք ազգաց սեպհական վարա- գուրի նորոգութեան խնդիրը բռնարարու- թեանն ենթակայ է, ոչ որ չը համարձակիր Շննդեան այրը իջնել, բայց միայն երկք ազգաց պատարադիները և ժամարարու- թեանն սպասաւորները— Խնդիրը այս վիճա- կին մէջ է :» (Փոսնց, Թիւ 362)

Գեր. Հասունը յիշելու առթիւ շնք ուզը լուս անյնիչ Ասթուրիկ ազգայնոց մէջ

ալ այս օրերս տեսնուած նշանաւոր շարժ- ման վրայ : Արշափ որ անդրաբնականք հա- յութիւնը խեղդիլու աշխատեցան, այնչափ ալ իրենց ճիգերն երթալով իրենց դէմ կը դառնան : Ահա կաթուրիկ ազգայնոց մէկ մեծ և լուսաւոր մասն իր ազգային զգացմանց և իրաւանց պահանջման համար ոտքի կենէ և մինչև իսկ հանրագրեր կը ներկայացնէ տիրութեան, որ իր խնդիրն ու շարքութեան կառնու : Մէծնուայր Հախախա լրագիրը, որ ժամանակ մը լուսթիւն կը պահէր կա- թուրիկ ազգայնոց վիճակին վրայ, հիմնց իրա-ւանց և միութեան պաշտպան կանդնած է, և լսածնուս նայելով՝ Գեր. Հասունեան զժգոհելով բողբաճ է առ Բ. Գուռն յի- շեալ լրագրին դէմ : Ժամանակը որչափ առաջ երթալու վրայ է :

(Մատիս Թ. 905) :

Հոռուական ազգայնոց մեծագոյն մասը ամենայն հաստատամտութեամբ կշարունա- կին իրենց բողբը ընդդէմ գեր. Հասունեա- նի, և կջանան բարեկարգութիւններ հաս- տատել :

Երբ այս ազգայնոց կողմանէ փոխանոր- գարար, փեմ. Միհրան պէյ Տիւզ՝ Պետան պէյ՝ Ապտուլահա՛ Միքայէլ Էֆէնտի և Պիլէզիկիճեան, մայրաքաղաքս ժողովի հա- մար հրաւիրեալ կախիկոպտաց երթալով, բարեկարգութեան ծրագիր մը և ընդդէմ գեր. Հասունեանի բողբազիր մը մատուցեր են : Գերապատիւ կախիկոպտուէք ազգային այս նշանաւոր երեսփոխաններն ամենայն սի- բով ընդունելով, ապահովացուցեր են զա- նոնք թէ ժողովն պիտի ներկայացունեն թէ՛ ծրագիրն ու թէ՛ բողբազիրը և խոր- հրդակցութեանն առարկայ պիտի ընեն :

Իրաց այս վիճակէն կրնանք դուշակել թէ՛ Հասունեան հիմն անհաստատ վիճակի մէջ կզանուի, քանի որ ժողովրդեան մեծ և ող- ջամիա մասը բողբ կրտնայ : Գեր. Հա-

սունեան արդեօք չպիտի զիջանի լսել ու  
յարդիկ ժողովրդեան ձայնը. [Թէ՛ հետեւելով  
իր մեծաւորն եղող Պապին, քնչ կարեմ՝  
պիտի գոչէ ու յամուտի, և հետեւարար խա-  
ղաղութեան տեղ խռովութեան պատճառ  
ԸԸայ՝

(Փունջ Թ. 564)

Հռովմէական ազգայնոց մէջ այս օրերս տեսնուած  
շարժումն արդարեւ մեծ պատիւ կը բերէ իրենց, եւ  
միանգամայն ցոյց կուտայ Թէ ոչ միայն իննեւտաս-  
ներորդ դարու, այլ եւ իրենց ազգութեան ու հայրե-  
նեաց ալ արժանաւոր զուակներ են (\*): Տաճկաստանի  
բրիտանեայ հասարակութիւններն ի վաղուց հետէ  
արտօնութիւն անին իրենց կրօնական զուխներն ընա-  
րելու, իրենց հողերս ու ազգային ներքին գործերը  
անօրինելու, եւ եկեղեցական ինքնիշխանութիւն վա-  
յկելու. Այս արտօնութիւնները Հռովմէական Հայ հա-  
սարակութիւնն ալ՝ աւրուածան կողմսն է իբրեւ ա-  
ռանձին մարմին ճանչուած օրէն ի վեր վայելելու  
իրաւունք ունեցաւ, եւ բաւական ժամանակ ալ գոր-  
ծադրեց: Պատրիարքներ, ազգապետներ ընտրեց, եւ  
ազգային ժողովներ կարգեց: Բայց՝ դժբախտաբար  
Գեր. Հասունեանին եկեղեցական իշխանութիւնը ձեռ-  
քըն անցուցած օրէն սխեռալ ժողովրդեան իրաւունք-  
ները միտն մի խլեցան. ընտրութեան իրաւունքը  
վերնադրով, ժողովրդեան ձայնը բոլորովին խղզուեցաւ.  
Իրաւունք, առանց որչա՞ ժողովուրդը չկրնար բնակա-  
նարար ազգային գործոց միջամտել: Պատրիարքու-  
թիւնն ու ազգային ժողովներն ալ վերջան. եւ այս-  
պէս Հռովմէական Հայք աւրուածան ի հնուց անտի  
շնորհած եւ 1836 ի Խաթի Հիւսնայունով ընդար-

ժակուած ամենէն կարեւոր առանձնաշնորհութիւն-  
ներէն զրկուեցան:

Ժողովուրդն այս բռնարարութեանց դէմ մերթ ընդ  
մերթ բողոքեց, մանաւանդ Գեր. Հասունեանի նա-  
խագահական աթոռը գրաւած միջոցին: Անկէ ետեւ  
բաւական տարիներ սահեցան, եւ ժողովուրդը Թէ-  
պէտ իր զանգատները միշտ լսին կերպիւ կը շա-  
բունակէր: Բայց այնչափ գործնական շարժում ցոյց  
տուած չբլբլով, վհատութեան կամ Թմրութեան մէջ  
ինկած կը կարծուէր: Ցաւալին այն է որ Գեր. Հա-  
սունեան, այս կարծեցեալ Թմրութեանն օգուտ քաղե-  
լով, աւելի մեծ ձեռնկերպութեանց ալ համարձակե-  
ցաւ: Արդէն իր բաղձանքն էր Լիբանանու կաթողի-  
կոսական աթոռը նախագահականին հետ միացնել,  
այսինքն այն ալ իր ձեռքն անցանել: Յիշեալ հողե-  
ւոր իշխանութեան վերջին զահակալին մահը յար-  
մար առիթ մ'ընծայեց իր նպատակն ի զուտ հա-  
նելու: Հռովմ իր ծառայութիւնները վարձատրեց,  
զինքը միանգամայն կաթողիկոս եւ Պատրիարք ըն-  
լով եւ Հռովմական Հայ ժողովրդին Տաճկաստանի  
մէջ ունեցած բոլոր նոգեւոր ու մալմուտը իշխա-  
նութիւններն անոր յանձնելով: Գեր. Հասունեան Կ.  
Պոլիս գառնալէ ետեւ, առանց ազգին բուն մ'իմա-  
ցնելու պատրիարքութեան հրովարտակն ալ ստա-  
ցաւ Բ. Գունէն զեսպանական եւ ուրիշ ազգեցու-  
թիւններով: Այսպէս ամեն բան կարգի դնելէ ետեւ,  
երեւելեաց ժողով մը գումարեց իր պատրիարքու-  
թեան հրովարտակը կարգացնելու համար. Ժողովու-  
րոց մեծ մասը բողոքեցին եւ իրենց բողոքը բանիցս  
անգամ ալ Բ. Գրան հաղորդեցին:

Ինչպէս որ այն ատեն ալ կաթիլ յայտնած էինք,  
մեր Հռովմէական ազգայիններն այս կէտիս վրայ  
առաւել անոր համար մեղադրելի կը համարուին, որ  
իրենց ժողովրդական իրաւունքներն այնչափ ժամա-  
նակ անգործադրելի ձգելէ եւ ազգային իրաց մէջ  
անտարբերութիւն ցոյց տալէ ետեւ, երբ որ իրաւունք-  
ներն յափշտակուեցան, այն ատեն իրենք ալ բողո-  
քել սկսան: Իրաւունք մը յափշտակուելէ կամ ձեռքէ  
հնկելէ ետեւ եղած բողոքներն եւ ետ գարծնելու ջան-  
քերը շատ անգամ ապարդիւն կիմեն: Այլ պէտք է  
միշտ իրաւանց պահպանութեան հող տանիլ, ան-  
վճար գործադրել եւ ամենափոքր բռնարարութեան  
մ'անգամ պատճառ եւ տեղի չտալ: Այսպէս միայն  
կարելի է իրաւունքն ականածիլ ընել եւ բռնարա-

(\*) Կը շնորհաւորեմք մեր միասնաբեամբ  
խաբուած Հռովմէական սիրելի եղբարց նոր  
այս ալլալին ոգւով եւ զգացմամբ բորբո-  
նուած շարժումը եւ ջանքերը, եւ կը խնդրեմք  
յեկկից կասաբեալ յաջողութիւն. որպէս զի Հայ  
Ազգութեան անուան նախասինք պահանառոյ,  
եւ ապալիսի հիմնաւորց վէ՛ր Ազգէն անջատեալ  
մի մասին տակաւ առ տակաւ խալառ կորուստ  
սպառնացող որոգաքիչ եւ եզանց դիմագրաւ  
նահիլիսանալով, յոշինջս գրեմ ո՛ւրբարեկամ օ-  
տարին կեղծուպսիւր հնարհները ու իղէ՛ք  
միանգամայն:

րու մենքէ պաշտպանել. Այս դասը պէտք է որ ապագային մէջ ամենուն ալ իրատ մը ըլլայ.

Սահայն ինչպէս կրտէ առածը. լաւ է անաղանքան երբէք: Հռովմէական հայ հասարակութիւնն ուր ուրեմն բողոքել սկսաւ, եւ իր բողոքները թէ պաշտօնապէս եւ թէ հրատարակման միջոցաւ կը շարունակէ: Իսկ Գեր. Հասունեան մինչեւ հիմայ ըրածները վաւերացնել տալու յուսով եպիսկոպոսական ժողով . . . . մը գումարեց: Թերեւս եկեղեցականներէն աւելի կողմ նազանգութիւն կը սպասէր. Թերեւս կը կարծէր որ եպիսկոպոսներն իր Հռովմն ստացած իշխանութիւնը մերժելու քաջութիւնը չէին կրնար ունենալ, եւ այն ատեն ամեն բան կարգի կը մտնէր, ժողովրդեան ծայնը եթէ բողոքովին չը մտնէր, զոնէ ազգեցութիւնը կը կորուսանէր թէ Բ. Գրան եւ թէ Հռովմ առջեւ, երբոր եպիսկոպոսներն ալ միահամուռ Գեր. Հասունեանի կողմը բռնէին: Այս ակնկալութիւնները եթէ կային, հիմայ ի դերեւ երած են. էպիսկոպոսաց մեծադոյն մասը խնդիրն ուրիշ կերպի կը նկատեն եւ ժողովրդեան կողմը կանգնելու միտումներ ցոյց կուտան: առանց Հռովմի դէմ ապստամբելու, որոյ վախճանն անկէ բաժանում միայն կրնայ ըլլալ, եղած իրողութեանց բոլոր պատասխանատուութիւնը Գեր. Հասունեանի վրայ կը ձգեն, պատճառ բռնելով թէ Գեր. Հասունեան ժողովրդին կամքն իր ուզածին պէս ցոյց տալով Հռովմը համոզած եւ կաթողիկոսական ու պատրիարքական իշխանութեան հասած էր, ինչպէս որ ետքն ալ Բ. Գրան համոզելով հրովարտակ մեք բերած էր:

Բայց ինչ որ ալ ըլլայ խնդրոյն այս կերպիւ նկատման ելքը, անյողողոց ցանք եւ յարատեւութիւն պէտք է գոհացուցիչ արդիւնք մը մեք բերելու համար: Հռովմէական հայ հասարակութիւնն առ այժմ մեծ եռանդեամբ իր բողոքները կը պնդէ, եւ հրատարակութեանց միջոցաւ ալ ի լուր աշխարհի կը հնչեցնէ: Մէծմուայի Հավատիս(՝) քրտիրը քանի մը դրուութիւն

(՝) Այս լրագրին խմբագիրը Հռովմէական է. եւ իւր ազատամտութեամբ, Հայ Ազգութեան ու Հայրենեաց անուան ու իրաւանց եպիսկոպոսներու հաւատարմութիւնը անձեանու իրաւեամբ արդարեւ արժանի կը հանդիսանայ հոմայն մեք սիրելի Ազգայնաց յարգանաց ու համակրութեանց. եւ բաւեալըրեմք ալսպէս շարունակել մի՛ջ:

ներ հրատարակեց, որոցմէ կը տեսնուի թէ ժողովուրդը խնդիրը հիմէն բռնած է. Գեր. Հասունեանի հրատարակման կը պահանջէ, եւ Կ. Պօլիս գումարած եպիսկոպոսներէն ալ կը խնդրէ որ ժողովրդական կամայ Թարգման եւ դործադիր ըլլան: Ասանցմէ զատ առանձին դիրքեր եւ տեսակներ ալ հրատարակուեցան, որոց վրայ ուրիշ անգամ կը խօսինք:

Այս մեծ եւ դրեթէ ընդհանուր շարժման դէմ անշուշտ մեծամեծ ալ արգելքներ կան, որոց ամենէն զլիստարն ու նշանակութեան արժանին այս է որ ժողովուրդը կատարուած իրողութեան մը (Ֆէթ արժմբի) դէմ կը մրցի: Բայց պէտք չէ մտնալ թէ հրջախ յաղթութիւնը դժուարին ըլլայ, այնչափ փառաւոր կը ըլլայ, ուստի բողոք ու պատերազմ բռնարարութեան դէմ:

Արդէն Գեր. Հասունեանի սակաւամիւ կուսակիցները ժողովրդական հզօր ծայնին առջեւ դիմադրելու չեն համարձակիր եւ լռութիւն կը պահեն: Ահաւասիկ, ըստ մեզ, յաղթութեան առաջին նշանը: Բայց ենթադրենք որ ժողովրդեան ծայնը չի կրնար ինքզինք յարգել տալ, այսու ամենայնիւ բարոյական յաղթութիւնը միշտ ժողովրդեան է, բանդի իրաւունքն ու արդարութիւնն անոր կողմն է. եւ թեպէտ Գեր. Հասունեան իր մեք բերած դառու վրայ մինչեւ ցվերքը բազմի եւ տիրէ, քանի սր ժողովուրդը պինքը չընդունիր, առանց մարմնոց զլուխ մ'է: Այս արարազայիս մէջ իր յաղթութիւնն անգամ պարտութիւն մ'է ամեն արդարախոհ միաբերու ինչպէս նաեւ անաչառ պատմութեան առջեւ: Մէկ բան մը միայն կրնայ զինքն արդարացնել, այն է կամովին հրատարական տալ, եւ ժողովրդեան իրեն յանձնել չուզած իշխանութիւնն անոր վերադարձնել:

(Մասիս Թ. 909):

Պ. Մ. ՍԱՆԱՍԱՐԵԱՆՅ

Ս. Պ. ԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԻՔ

ԵՒ

ՆՈՅՑ ԳՐԱՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մարդիկ երբ ընկերական սիրով մեծ պարտաւորութիւն ունին միմեանց միշտ օգնելու ամենայն պարագայից մէջ բաղմուտեալ մի-